ԾԱՂԿԵՊՍԱԿԸ ՈՐՊԷՍ ՑՈՒՑԱՊԱՍՏԱՌ
(Ցեղասպանութիւնը եւ հայ ինքնութեան պատկերագրութիւնը)[1]

Յարութիւն Մարութեան

Ազգային ինքնութեան խօսուն դրսեւորումներից են պատկերներն ու գրաւոր բանաձեւերը, որոնք, որպէս կանոն, մեծ թուով ի յայտ են գալիս հասարակութեան համար ճգնաժամային պահերին[2]: Այս առումով ուսումնասիրութեան հարուստ եւ մեծ դաշտ է ներկայացնում Ղարաբաղեան շարժումը (1988-1990)[3]:

Ղարաբաղեան շարժումն իրապէս համաժողովրդական առաջին ընդվզումն էր Խորհրդային Միութեան տարբեր ծայրերում ծաւալուած զանգուածային ելոյթների շարքում: Այդ պատճառով էլ, նախադէպ չունենալով, իրեն բնորոշ առանձնայատկութիւններն այն մշակում էր տարբերայնօրէն, պետական հզօր մեքենային դիմակայելու պայմաններում: Արագօրէն փոփոխուող իրադարձութիւններին զուգընթաց, կերպափոխւում էր եւ ժողովրդի ինքնութիւնը՝ 1990 թ. ցուցարարը էապէս տարբերւում էր 1988 թ. փետրուարեան հանրահաւաքների մասնակցից:

Ի թիւս Շարժումով կեանքի կոչուած վառ երեւոյթների, կարելի է նշել ժողովրդական ստեղծագործութեան իսկական պոռթկումը, ինչը յատկապէս ակներեւ դրսեւորուեց Շարժման բոլոր փուլերին ուղեկցած եւ իրադրութեան բոլոր փոփոխութիւններին անմիջապէս արձագանքած պատկերագիր «վկաներում»՝ ցուցապաստառներում[4]: Դրանցով շատ յարմար է հետեւել Շարժման անցած բոլոր փուլերին, քաղաքական կողմնորոշումների եւ ինքնութեան ձեւափոխմանը[5]: Հարկ է նշել, որ Հայաստանի հայազգի բնակչութեան այժմեան ինքնութեան մի շարք գծեր ձեւաւորուել են հէնց Ղարաբաղեան շարժման տարիներին:

Շարժման ընթացքում եւ յաջորդող տարիներին տողերիս հեղինակը հաւաքել է շուրջ 1000 միաւոր ցուցապաստառներ: Դրանց շարքում կարելի է առանձնացնել մօտ 20 թեմատիկ խումբ, որոնցից կարեւորագոյններն են. 1. Հայերի ցեղասպանութիւնը (աւելի քան 315 ցուցապաստառ), 2. Ղարաբաղը՝ Հայաստանի մաս (60), 3. ԽՍՀՄ ղեկավարութեան քննադատութիւնը (58), 4. Հայ ժողովուրդ, հայոց լեզու եւ հայ դպրոց (52), 5. բիւրոկրատիա, վերակառուցման ու հրապարակայնութեան քաղաքականութեան թշնամիներ, մամուլի ծախուածութիւնը (49), 6. Ղարաբաղը եւ դեմոկրատացման քաղաքականութիւնը (31), 7. Հայաստանի անկախութիւնը (30), 8. Ադրբեջան եւ ադրբեջանցիներ, պանիսլամիզմ եւ պանթիւրքիզմ (30), 9. վերաբերմունքը ԽՄԿԿ-ի նկատմամբ (27), եւ այլն:

Այս ցուցակում նկատւում է մի հետաքրքիր առանձնայատկութիւն՝ ցեղասպանութեանը նուիրուած ցուցապաստառների մի քանի անգամ գերակշիռ լինելը Ղարաբաղեան շարժման՝ թւում է, թէ հիմնական գաղափարի՝ Արցախի եւ Հայաստանի վերամիաւորմանը նուիրուած ցուցապաստառների նկատմամբ: Ի՞նչն է բանը: Այս հարցին ես փորձել եմ պատասխանել ցուցապաստառների իսկ օգնութեամբ: Սոյն յօդուածն այդ շարքի մի հատուածն է միայն:

* * *

Ցեղասպանութեան թեմայի արծարծումը Խորհրդային Հայաստանում քաղաքական նկատառումներով երկար ժամանակ փաստօրէն արգելուած էր: 1960-ական թթ. խրուշչովեան «ձնհալի» հետեւանքով էր թերեւս, որ 1965 թ. ապրիլին, ցեղասպանութեան 50-ամեակի նշման ժամանակ, Երեւանում տեղի ունեցան զանգուածային ելոյթներ, որոնք այդ ժամանակներում Խորհրդային Միութիւնում բաւականին անսովոր երեւոյթ էին: Այդ ելոյթները եւ դրանց յաջորդող՝ գրականութեան ու արուեստի մէջ ցեղասպանութեան թեմայի նկատմամբ հետաքրքրութեան կտրուկ աճը վկայում են, որ ցեղասպանութեան յիշողութիւնը, չնայած այն լռութեան մատնելու պաշտօնական քաղաքականութեանը, շարունակում էր ապրել մարդկանց հոգիներում եւ գիտակցութեան մէջ: Ընդ որում, այդ յիշողութեան մէջ հայերը բացառապէս ներկայացւում էին որպէս անմեղ զոհ, որը կորցրել է իր պատմական հայրենիքի մեծ մասը եւ կարիք է զգում կարեկցանքի: Մինչդեռ ազգային-ազատագրական պայքարի եւ դրա ֆիդայի-հերոսների թեման շարունակում էր մնալ չյայտարարուած արգելանք: Այդ ժամանակաշրջանի եղեռնի թեման շօշափող գործերի հիմնական բովանդակութիւնը կարելի է ձեւակերպել Սիլվա Կապուտիկեանի «Մտորումներ ճանապարհի կէսին» պոեմի «խաղաղ վրէժի» պատգամով՝ «Դու պիտի վրէժ առնես ապրելով» կոչով[6], որն անգամ մեր օրերում ընկալւում է որպէս հայ ժողովրդի հետագայ ճանապարհի ամենամաստուն բանաձեւերից մէկը[7]:

Բնորոշ է, որ 1965 թ. ապրիլեան ելոյթների ժամանակ ցուցարարների ձեռքին մէկ-երկու պլակատ ու տրանսպարանտ էր միայն, ուր հայկական հարցի արդարացի լուծման կոչ էր արւում[8]: Մէկ այլ մեծ, հաւաքական բնոյթի տրանսպարանտում, որ տանում էին բազմահազարանոց ցոյցի առջեւից, նշուած էր լոկ Մեծ Եղեռնի տարեթիւը՝ 1915 եւ զոհերի թիւը՝ 2 մլն: Դա բացատրւում է, թերեւս, այն բանով, որ այդ ելոյթները չհասցրին վերաճել ժողովրդական շարժման:

1965 թ. ելոյթները նպաստեցին այն բանին, որ Երեւանում, Մծբեռնակաբերդի գեղատեսիլ բարձունքին, բայց որ ամենակարեւորն է՝ քաղաքի կենտրոնից հեռու, բաւականին կարճ ժամկէտում կառուցուեց յուշահամալիր[9], այնպէս որ 1968 թ. ապրիլի 24-ին ժողովուրդը դուրս եկաւ ոչ թէ մայրաքաղաքի կենտրոնական փողոցներն ու հրապարակները, այլ կազմակերպուած շարասիւներով շարժուեց դեպի քաղաքի ծայրամասը, որպէսզի ծաղիկներ ու ծաղկեպսակներ դնի ցեղասպանութեան զոհերի յուշարձանին: Այդպիսով, 1965 թ. ապրիլի 24-ի զանգուածային ելոյթները յաջորդ տարիներին ձեւափոխուեցին ոչ պաշտօնապէս թոյլատրուած սգոյ երթերի: 1970-ականների կէսերից դրանք փաստօրէն գլխաւորում էին Հայաստանի կոմունիստական ղեկավարները, ովքեր վաղ առաւօտեան առաջին ծաղկեպսակն էին դնում յուշարձանին: Այդ երթերը եւս չէին ուղեկցւում ցուցապաստառներով, չնայած ծաղկեպսակներն ունէին սգոյ ժապաւէններ՝ ստանդարտ գրութիւններով, ձեւաւորուած «Եղեռնի զոհերին + կազմակերպութեան, հազուադէպ՝ ծաղկեպսակը դնող մարդկանց անուններ» բանաձեւով: Նման ձեւակերպումն ընդգծում էր այն հանգամանքը, որ մարդիկ յուշահամալիրն ընկալում էին որպէս մահարձան, այսինքն՝ մարդիկ գնում էին յուշահամալիր, ինչպէս կը գնային գերեզմանոց՝ ի-

© National Library of Armenia

բենց ծանօթի կամ հարազատի գերեզմանին այցի: Ցուցապաստառների, այն է՝ զգացմունքների գրաւոր եւ պատկերային հրապարակաւ դրսեւորումների բացակայութիւնը մասամբ լրացնում էր սգոյ երթի առանձին մասնակիցների բանաւոր ստեղծագործութեամբ. մարդիկ կարդում կամ արտասանում էին հայրենասիրական բնոյթի, ինչպէս նաեւ ցեղասպանութեան թեմային առնչուող բանաստեղծութիւններ, ինչը, ի միջի այլոց, չէին խրախուսում քաղաքացիական հագուստ եւ թեւքերին կապոյտ ժապաւէններ կրող հասարակական կարգի պահպանները, որոնք մեծ քանակութեամբ ներկայ էին լինում յուշահամալիր-զբօսայգու ամողջ տարածքում եւ, մասնաւորապէս, յուշարձան տանող ճանապարհի երկայնքով: Հետաքրքիր է ժապաւէնների գոյնի ընտրութիւնը՝ այն մօտ էր սգոյ աւանդական սեւ գոյնին, բայց գործառոյթով կատարում էր դրուժինիկի՝ միլիցիայի կամաւոր օգնականների կարմիր գոյնի ժապաւէնի դերը:

* * *

1988 թ. փետրուարի հայերի սումգայիթեան ջարդերից յետոյ, ցեղասպանութեան թեման կրկին ուժգնօրէն յիշեցրեց իր մասին: Ինչպէս եւ նախորդ տարիներին, ապրիլի 24-ի սգոյ երթի (նկ. 1) մասնակիցները ծաղկեպսակներ էին տանում, սակայն այս անգամ դրանք շատ աւելին էին, աչքի էին ընկնում բազմազանութեամբ ու աւելի ճոխ ձեւաւորմամբ: Հարկ է նշել, որ ապրիլի 24-ի երթը փաստօրէն առաջին պաշտօնապէս արտոնուած ցոյցն էր հանրահաւաքների 1988 թ. մարտեան արգելքից յետոյ, որով իշխանութիւնները փորձում էին կանխել փետրուարեան հանրահաւաքներից յետոյ սպասուող զանգուածային ելոյթների նոր փուլը: Ուստի զարմանալի չէր, որ ծաղկեպսակներից զատ, մարդիկ տանում էին բազմաթիւ ցուցապաստառներ, այսինքն՝ սգոյ երթը գործնականում քաղաքական ցոյց էր, որի հիմնական բովանդակութիւնը սումգայիթեան ջարդերի նոյնացումն էր 1915 թ. Եղեռնի հետ: Այնուամենայնիւ, բուն՝ 1915 թ. ցեղասպանութեան թեման մնում էր, բնականաբար, գերիշխողը: Չնայած պլակատների թիւն այս ցոյցի ժամանակ համեմատաբար քիչ էր, ծաղկեպսակներն իրենք, կարելի է ասել, կատարում էին նման դեր, քանզի դրանց ձեւաւորումը, նախորդ տարիների համեմատութեամբ, շատ աւելի սիմվոլիկ-գեղարուեստական իմաստ ունէր: Հնարաւոր է, որ ծաղկեպսակների գերակշռութիւնը պայմանաւորուած լինէր նաեւ իշխանութիւնների կանխիչ գործողութիւններից 1988 թ. ապրիլեան երթի մասնակիցների զգուշանալով. ինչպէս իրաւացիօրէն ենթադրում էին նրանք, դժուար թէ իրաւակարգի հայ պահպաններն անյարգալից վերաբերուէին ցուցապաստառի դեր կատարող, սակայն աւանդաբար յուշային ֆունկցիա ունեցող ծաղկեպսակներին:

1989 եւ 1990 թթ. ապրիլի 24-ին, երբ Ադրբեջանում վերջին ջարդերի զոհերը հայերի գիտակցութեան մէջ արդէն ձուլուել էին 1915 թ. զոհերի զանգուածին, սգոյ երթերի ժամանակ օգտագործուող քաղաքական բնոյթի ցուցապաստառների թիւը նկատելիօրէն աւելացաւ: Ըստ երեւոյթին, դրանում դեր խաղաց նաեւ այն հանգամանքը, որ 1989 թ. ապրիլին, երբ «Ղարաբաղ» կոմիտէի անդամները բանտարկուած էին, իսկ քաղաքական ելոյթները՝ մեծապէս սահմանափակուած, մարդիկ օգտագործում էին ցանկացած թոյլատրուած միջոցառում քաղաքական ցոյցի վերածելու հնարաւորութիւնը: 1990 թ. ապրիլը՝ առաջին դեմոկրատական ընտրութիւնների նախաշեմը, ընդհանուր

առմամբ առանձնանում էր քաղաքական աւելի մեծ ազատութեամբ: Յաջորդ տարիներին, աջ ազգային ուժերի յաղթանակից ու անկախութեան հռչակումից յետոյ, քաղաքական բնոյթի ցուցապաստառների կարիք գործնականում արդէն չկար, եւ ծաղկեպսակները, որոնք աւելի էին պատշաճում ցեղասպանութեան զոհերի յուշարձանին, քան թէ պլակատն ու տրանսպարանտը, վերստացան իրենց աւանդական յուշային նշանակութիւնը:

* * *

Ծաղկեպսակների մի խումբ 1915 թ. ցեղասպանութեան անմեղ զոհերի յիշատակին ուղղուած իր յուշային գործառոյթն իրականացնում էր ծաղիկների դաշտի համապատասխան ձեւաւորմամբ:

Այսպէս, 1988 թ. ապրիլքսանչորսեան մի ծաղկեպսակի կարմիր մեխակներով հիմնագոյնին սպիտակ մեխակներով ստեղծուած էր Մասիսների ուրուապատկերը, որի վրայ նոյնպէս կարմիր մեխակներով գրուած էր «1915»: Երկու տարի անց նոյն սկզբունքով ստեղծուած ծաղկեպսակի (նկ. 2) վրայի Մասիսների ստորոտին գրուած էր «75» (ցեղասպանութեան 75-ամեայ տարեդարձը), իսկ վերին ձախ անկիւնում՝ կրկին ծաղկային ձեւաւորմամբ, հայկական եռագոյն դրօշակն էր: Մասիսների ուրուապատկերով ձեւաւորուած ծաղկեպսակների աւանդոյթը շարունակուեց նաեւ 1990-ական թթ.: Մասնաւորապէս, 1999 թ. ապրիլի 24-ին հանդիպեց դեղին մեխակներով ստեղծուած Մասիսներ կանաչ ճիւղերի հիմնագոյնով ծաղկեպսակի վրայ, որ տանում էին «Ժողովրդական հայրենիք» կուսակցութեան գործիչները (նկ. 3): Քանի որ Մասիսների պատկերը վաղուց ի վեր համահայկական ինքնութեան խորհրդանիշերից է[10], ուստի դրանք ծաղկեպսակների վրայ պատկերելով կարծես թէ ակնարկւում էր, որ ողջ հայութիւնն է նշում ցեղասպանութեան տարեդարձը, ծաղիկներ դնում ցեղասպանութեան զոհերի յուշարձանին ու այդպիսով յարգում զոհերի յիշատակը: Թերեւս նման գաղափար էր դրուած 1988 թ. ապրիլեան մէկ այլ ծաղկեպսակի ձեւաւորման մէջ. այն ստեղծուած էր մեծատառ «Ե»-ի՝ «Եղեռն» բառի առաջին տառի ձեւով, որի հորիզոնական գծիկի վրայ նոյնպէս ծաղիկներով ձեւաւորուած էին երկգագաթ Մասիսները (նկ. 4): Այդ ուշագրաւ գեղարուեստական լուծումը փաստօրէն շարունակում է հայ միջնադարեան ձեռագիր բնագրերում՝ բաւականին յաճախ հանդիպող գլխազարդերի պատկերային ձեւաւորման[11] աւանդոյթը: Եղեռնի զոհերի յիշատակի համահայկական յարգման գաղափարն էր թերեւս դրուած նաեւ 1989 թ. ապրիլի 24-ին հայոց պետականութեան խորհրդանիշ հանդիսացող ազգային դրօշի (որը միայն մէկ տարի անց դարձաւ պետական) երեք՝ կարմիր, կապոյտ, նարնջագոյն գոյներով ձեւաւորուած ծաղկեպսակ-«պլակատների» ստեղծման հիմքում:

Շատ էին գունային տարբեր լուծումներ ունեցող խաչի պատկերներով ծաղկեպսակները: Այսպէս, 1989 թ. ապրիլի 24-ին Ամենայն հայոց եւ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսների՝ Վազգեն Ա-ի եւ Գարեգին Բ-ի անունից երկու ծաղկեպսակ էր դրուել՝ համապատասխանաբար սպիտակ խաչով՝ կարմիր հիմնագոյնին եւ կարմիր խաչով՝ սպիտակ հիմնագոյնին (նկ. 5): Այս տիպի ծաղկեպսակներին զուգահեռ, 1990-ական թթ. երկրորդ կէսին մեծ տարածում ձեռք բերեցին հէնց խաչաձեւ ծաղկեպսակները: 1990 թ. ապրիլի 24-ին ֆիքսուած նման ծաղկեպսակներից մէկի խաչն ունէր խաչաձեւ իսկ գրու-

© National Library of Armenia

թիւն, կազմուած հորիզոնական «Մեծ» եւ ուղղահայեաց «Եղեռն» բառերից՝ ընդհանուր կենտրոնական «ե» տառով: Ծաղիկներից կազմուած այդ խաչը տեղադրուած էր պատուանդանին եւ դա, ըստ երեւոյթին, բաւական էր, որ մարդիկ այն ընկալեն որպէս խաչքար եւ սկսեն ծաղիկներ դնել դրա հիմքին (նկ. 6):

Մասիսների եւ խաչի համակցմամբ ստեղծուած մի հետաքրքիր ծաղկեպսակ կար 1992 թ. ապրիլին Հայաստանի արտաքին գործերի նախարարութեան անունից. Մասիսների գագաթների միջեւ տեղակայուած էր կլոր վահան եւ սուր, որի խաչաձեւ բռնակն արեւի նման բարձրանում էր լեռան վերնամասում: Այս յօրինուածքը բաւական «խօսուն» է, չնայած այն ստեղծողները դժուար թէ գիտակցաբար ներդնէին մեզ տեսանելի իմաստը: Բանն այն է, որ խորհրդային մարդու գիտակցութեան մէջ վահանն ու սուրը հաստատուն կերպով զուգակցւում են Պետական անվտանգութեան կոմիտէի (КГБ) սիմվոլիկայի հետ, որը ջարդում-փշրում էր երկրի ինչպէս արտաքին, այնպէս էլ ներքին թշնամիներին: Ծաղկեպսակ-«պլակատի» վահանն ու սուրը, դատելով դրա «տիրոջից» եւ նուիրաբերման առիթից, միտուած էին պաշտպանութեան լոկ արտաքին թշնամուց, որն, ընդ որում, ընկալւում էր որպէս 1915 թ. ցեղասպանութեան մեղաւոր: Հետաքրքիր է, որ 1997 թ. արդէն պետանվտանգութեան մարմինների (որոնք վերանուանուել էին «ազգային անվտանգութեան մարմիններ» եւ ներքին գործերի մարմինների հետ կազմում էին ընդհանուր նախարարութիւն) մի ստորաբաժանում յուշարձանին դրեց իւրօրինակ յօրինուածք ունեցող մի «ծաղկեպսակ», որն ունէր աւելի վառ արտայայտուած հայկական ինքնութիւն եւ առաջարկած գաղափարներով միտուած էր տարածքային նկրտումների: «Ծաղկեպսակը» նշանակալի չափերի մի կառոյց էր, որը կրկնում էր Մեծ ու Փոքր Մասիսների ուրուապատկերը, որոնց գագաթները ձեւաւորուած էին եռագոյնով՝ Հայաստանի հանրապետութեան պետական դրօշի գոյներով (նկ. 7), իսկ դրանց ստորոտին գրուած էր ինչպէս նախարարութեան անուանումը, այնպէս էլ դրա մաս կազմող մի զօրամասի՝ «յատուկ մարտական ստորաբաժանում» անուանման յապաւումը՝ ՀՄՍ, ում կողմից որ բերուած էր ծաղկեպսակը:

Մասիսների, նրանից ծագող խաչի եւ նրա ստորոտում գտնուող մէկ այլ սրբութեան՝ գրքի (ամենայն հաւանականութեամբ, Սուրբ գրքի[12], այն է՝ Աստուածաշնչի) պատկերներով ձեւաւորուած հետաքրքիր ծաղկեպսակներ կային Եղեռնի զոհերի յուշարձանին 1999 եւ 2000 թթ. ապրիլեան «նուիրատուութիւններում» (նկ. 8): Հայ մարդու համար այս խիստ հարազատ խորհրդանիշերը ներառուած էին երկրագունդ յիշեցնող շրջանի մէջ եւ բերուած էին, ինչպէս ցուցում էր սգոյ ժապաւէնը, «Քրիստոնէական մշակութային միջազգային կազմակերպութիւններից» եւ, մասնաւորապէս, «Հայաստանի Աւետարանական եկեղեցու» կողմից:

1988 թ. մի շարք ծաղկեպսակներ ձեւաւորուած էին յաւերժութեան աւանդական նշանի՝ պտտուող կեռխաչի (սվաստիկա) ձեւով: 1990-ական թթ. կէսից, արդէն կորցնելով պլակատային գործառոյթը, այդ նշանը խաչի հետ միասին դարձաւ դերիշխող այն ծաղկեպսակների ձեւաւորման մէջ, որոնք Հայաստանի բարձրագոյն ղեկավարութիւնը դնում էր Եղեռնի զոհերի յուշարձանին: Այդպիսի ծաղկեպսակները դրւում էին նաեւ այլ կազմակերպութիւնների, առանձին անհատների կողմից: Իսկ 1999 եւ 2000 թթ.

ապրիլին կային մէկական ծաղկեպսակային ձեւաւորումներ, որտեղ խաչն ու յաւերժութեան նշանը հանդէս էին գալիս միասին. քառանկիւնի յենքի վրայ ժապաւէնների միջոցով ստեղծուած խաչի միջնամասին ամրացուած էր յաւերժութեան նշանի ձեւով ձեւաւորուած ծաղկեպսակ (նկ. 9): Նոյն տարիներին պատրաստւում էին ծաղկեպսակներ, որոնք ձեւաւորուած էին կարմիր եւ սպիտակ մեխակներով ստեղծուած յաւերժութեան նշանի իրար վրայ դրուած երկու մակարդակներով. այդպիսիք էին Մորգենթաուի[13] ընտանիքի (նկ. 10) եւ Ամերիկայի հայկական համագումարի[14] (նկ. 11) կողմից դրուած ծաղկեպսակները:

Ծաղիկներից կազմուած յաւերժութեան նշանը 1988-ին կարող էր «կրկնուել» նոյն կամ այլ ծաղկեպսակի սգոյ ժապաւէնի վրայ բառային բանաձեւով՝ «Ցեղասպանութեան զոհերի անմոռաց յիշատակին» (նկ. 12) կամ առանձին պլակատի վրայ՝ «Ձենք մոռանայ անմեղ զոհերի յիշատակը»:

Ծաղկեպսակ-«ցուցապաստառների» գեղարուեստական ձեւաւորման բարձրակէտը կարելի է համարել 1990 թ. ապրիլի 24-ը, երբ նշւում էր ցեղասպանութեան 75-ամեակը: Այսպէս, մի ծաղկեպսակի կարմիր հիմնագոյնին Մասիսների սպիտակ մեխակներով ստեղծուած ուրուապատկերի վերեւը ծաղիկների իսկ միջոցով «նկարուած» էին սպիտակ խաչ ու աղաւնի եւ հայկական եռագոյն դրօշը (նկ. 13): Այստեղ երեւում են հայ ինքնութեան նշանները, այն է՝ քրիստոնէական հաւատքը (խաչ), պետականութիւնը (եռագոյնը), բիբլիական անցեալը (Արարատը եւ աղաւնին՝ Նոյ նահապետի լրաբերը): Այս դէպքում աղաւնին հանդէս է գալիս ոչ թէ որպէս խաղաղութեան նշան, այլ աւելի շուտ բիբլիական սիմվոլիկայի մաս է կազմում, որն ընդհանրապէս ներկայացւում է լեռան գագաթին հանգրուանած տապանի պատկերով (ինչպէս որ է, օրինակ, Հայաստանի Առաջին եւ Երրորդ հանրապետութիւնների զինանշանների վրայ): Ըստ երեւոյթին, տուեալ դէպքում աւելի հեշտ է եղել ծաղիկների միջոցով աղաւնի պատկերելը, քան թէ տապան՝ լեռան գլխին: 1992 թ. յուշարձանին դրուած մէկ այլ ծաղկեպսակում պատկերուած մեծ սպիտակ աղաւնին եւս աւելի շուտ առնչւում է Նոյեան աղաւնուն՝ յոյսի խորհրդանիշին, քանզի այդ պսակը դրուած էր «Հայաստանի յոյս» կազմակերպութեան անունից:

Հետաքրքիր պատկերագրութեան մէկ այլ օրինակ է 1990 թ. ապրիլեան մի ծաղկեպսակ-«պլակատ», որի կարմիր մեխակներով հիմնագոյնին սպիտակ մեխակներով պատկերուած էր ցեղասպանութեան զոհերի յիշատակին կառուցուած յուշարձանի երկու մասերի ուրուապատկերը՝ յոբելեանական «75» տարեթուով (նկ. 14, 2): Ցիշեալ յուշարձանի պատկերը հանդիպում է 1988 թ. Թատերական հրապարակում յայտնուած առաջին իսկ պլակատներում, օրինակ՝ սումգայիթեան եղեռնին նուիրուած գունագեղ մի պլակատում (նկ. 15): Հետաքրքիր է, որ ցեղասպանութեան զոհերի յուշարձանի պատկերով վերոնշեալ ծաղկեպսակ-«ցուցապաստառը» 1990 թ. տանում էին հէնց դէպի յուշարձանը: Աւելին, այդ նոյն տարի նուիրաբերութիւնների թւում էր եւ իր տեսակով եզակի մի բան՝ Եղեռնի զոհերի յուշարձանի մանրակերտը: Այն շատ էր յիշեցնում այն մանրակերտերը, որ ցուցարարները խորհրդային պաշտոնական տօնական շքերթների ժամանակ անց էին կացնում հրապարակների տրիբունաների առջեւից:

© National Library of Armenia

Կոթողի մանրակերտն ունէր գրեթէ երկու մետր բարձրութիւն եւ պատուած էր սեւ կտորով, որի վրայ բրոնզագոյնով գրուած էր «75», ապա՝ «Եղեռն» ու «Genocide»: Յուշարձանի յաւերժական կրակով հատուածի գրեթէ մէկուկէս մետրանոց մանրակերտն ամբողջութեամբ պատուած էր կարմիր մեխակներով եւ այդ հիմնագոյնին սպիտակ մեխակներով գրուած էր «1915»: Այս յուշարձան-մանրակերտի առջեւի չորս «սալերը» ստորին մասում, սեւ կտորով պատած հիմքի վրայ ունէին սպիտակ ներկով գրուած օսմանեան Թուրքիայում եւ Խորհրդային Միութիւնում հայերի կոտորածների եւ տեղահանութիւնների իրականացման տարեթուեր՝ 1896[15], 1909[16] (սուլթան Համիդի եւ երիտթուրքերի իշխանութեան տարիներին), 1988 (սումգայիթեան ջարդեր, Ադրբեջանի հայութեան տեղահանութիւն), 1990 (Բաքուի ջարդեր, Ադրբեջանի հայութեան տեղահանութեան աւարտ): Այս զանգուածեղ երկմաս կառոյցը դրուած էր պատգարակի տիպի պատուանդան-յենակի վրայ, որը տանում էին չորս երիտասարդ (նկ. 16): Ըստ երեւոյթին, մանրակերտի այդօրինակ «նուիրաբերումը» բնօրինակին կարելի է յարադրել աստուածութեան խորհրդանշանների նուիրաբերմանն իրեն՝ աստուածութեանը. համեմատիր սրբապատկերների նուիրաբերումը նրանց անունը կրող սրբատեղիներին, խաչերի, խաչելութեան սիմվոլների նուիրաբերումը հաւատն առ Քրիստոս մարմնաւորող եկեղեցիներին, վերջապէս, կոմունիստական առաջնորդների նկարների «նուիրաբերումը» հէնց նրանց կենդանի, մահացած կամ սիմվոլիկ կերպարներին: Հետաքրքիր է, որ մանրակերտի հետեւից տանում էին Արարատի պատկերով մեծ պլակատ, այնպէս որ յուշարձանի մանրակերտը դիմացից նայողներին թւում էր միացած Մասիսների հեռապատկերին: Այդպիսով, յուշարձանի մանրակերտն, ասես թէ նոյն բնանկարով, «գնում էր» դէպի իր նախօրինակը:

1997 թ. ապրիլեան այդպիսի նուիրաբերումների շարքում յիշատակելի է մի ծաղկեպսակ, որտեղ սպիտակ հիմնագոյնին ծաղիկներով իսկ ստեղծուած էր յաւերժական կրակի ուրուապատկերը, այսինքն՝ յուշարձանին տանում էին ոչ թէ դրա ամբողջական, այլ մասնակի պատկերը՝ «յուշարձանի սիրտը» (նկ. 17): Յատկանշական է, որ ծաղկեպսակը «Հայնաւթամթերքի» աշխատակիցների անունից էր, մի կազմակերպութիւն, որը որոշ չափով պատասխանատու էր Հայաստանում «կրակի» առկայութեան համար: 1990-ականների սկզբի էներգետիկ ճգնաժամի «մութ» տարիներին յուշարձանի յաւերժական կրակը մարեց ամբողջ քաղաքի լոյսի հետ միասին (այն վառում էին միայն յիշատակի օրերին), փաստ, որը բաւական ցաւագին էր ընդունում ինչպէս Հայաստանի, այնպէս էլ Սփիւռքի հայութիւնը:

* * *

Լինելով ցեղասպանութեան զոհերի «գերեզմանին» ծիսական նուիրաբերման աւանդական ձեւ, ծաղկեպսակը ծնունդ տուեց տրանսպարանտների, որոնք կրում էին նուիրաբերուող ծաղկեպսակի գաղափարը՝ խօսքի մակարդակով: Այդպիսին է, օրինակ «Ցարգանք հայ ժողովրդի միլիոնաւոր նահատակներու անթաղ հոգիներուն» տրանսպարանտը (նկ. 18), որը բանաստեղծական, բայց մի քիչ անյաջող ձեւակերպմամբ (ճիշտ կը լինէր «...անթաղ նահատակներու հոգիներուն») ցեղասպանութեան 75-ամեակի օրերին կոչում էր խոնարհման՝ դրա զոհերի յաւերժ յիշատակին[17]: Մէկ այլ յիշեցում-տրանսպարանտում՝ «Մեծ Եղեռնի զոհերի յիշատակի յարգումը՝ հայրենիքի ազատագրումն է» (նկ. 13), որ տանում էր ֆիդայական արտաքինով ու զինուորական համազգեստով մի երիտասարդ, նշւում է, թէ գործնականում ինչպէ՞ս պէտք է դրսեւորուի այդ յիշողութիւնը: Հետաքրքիր է, որ այդ տրանսպարանտը ձեւաւորմամբ փոխակերպուած ծաղկեպսակ է՝ ծաղիկներն են, որ երիզում են սգոյ գրութիւնը: Այս ծաղկեպսակ-ցուցապաստառներից մէկ տարի առաջ մէկ այլ տրանսպարանտ փոքր ինչ այլ կերպ էր ազդարարում Մեծ եղեռնի վերաբերեալ յիշողութեան պահպանման անհրաժեշտութիւնը՝ կոչ անելով ստեղծել հայերի ցեղասպանութեան թանգարան, որը, ի միջի այլոց, վեց տարի անց, 1995 թ., բացուեց յուշահամալիրի իսկ տարածքում:

* * *

Եթէ ծաղկեպսակի ծաղկային ձեւաւորումն «ապահովում էր» ծաղկեպսակ-ցուցապաստառի պլակատային մասը, ապա ծաղկեպսակի սգոյ ժապաւէնը, կարելի է ասել, ցուցում էր նրա տրանսպարանտային գործառոյթը: Ժապաւէնների վրայ հանդիպող գրութիւններն, որպէս կանոն, բաղկացած էին երկու մասից. առաջին կէսում այս կամ այն ձեւակերպմամբ նշւում էր, որ ծաղկեպսակը ուղղւում է Եղեռնի զոհերի յիշատակին, իսկ երկրորդ կէսում գրուած էր, թէ ում անունից է այն:

Հարկ է նշել, որ այդօրինակ ուղերձների «յետադարձ հասցէն» յաճախ կրում է թաքնուած իմաստ, որը Հասկանալի է դառնում հայ ժողովրդի պատմութեան ընդհանուր համատեքստում միայն: Այսպէս, 1988 թ. ապրիլեան մի ծաղկեպսակը երիզող սգոյ ժապաւէնի մի կէսում գրուած էր՝ «Յաւերժ յիշատակ Մեծ Եղեռնի նահատակներին», իսկ երկրորդ կէսում, որ առաջինից բաժանուած էր ուղղահայեաց գծով, նշուած էր, թէ այն ում անունից է՝ «Նախիջեւանեան հայրենակցական միութիւն» (նկ. 19): Հետաքրքիր է, որ վերոյիշեալ տրանսպարանտում իրենք՝ նախիջեւանցի հայերն են ցեղասպանութեան զոհեր, միայն ոչ թէ 1915 թ., այլ՝ խորհրդային շրջանի, այսպէս կոչուած, «սպիտակ» ցեղասպանութեան[18]: Եվ կամ վերը նկարագրուած «Մեծ Եղեռնի զոհերի յիշատակի յարգումը՝ հայրենիքի ազատագրումն է» տրանսպարանտ-«ծաղկեպսակի» «յետադարձ հասցէն»՝ «Հ[այ]. Ց[եղափոխական]. Դաշնակցութեան Հ[այաստանի]. կազմակերպութիւն» (նկ. 13), աւելի հասկանալի է դարձնում ցեղասպանութեան զոհերի յիշատակի յարգման միջոցը՝ Հայրենիքի (Արեւմտեան Հայաստանի իմաստով) ազատագրման ճանապարհով, քանզի այդ գաղափարը համահունչ է այդ կուսակցութեան քաղաքական ծրագրի կարեւորագոյն դրոյթներին անցեալում եւ 1980-ականներին[19]: Նկատենք, որ դիտարկուող տրանսպարանտ-«ծաղկեպսակի» բուն տեքստը «մէջբերումային մտածողութեան» (մանրամասն տես ստորեւ) տիպիկ դրսեւորում է, իրենից ներկայացնելով 1982 թ. ՀՅԴ Ծրագրի «Նպատակ» բաժնի Ե կէտում գրուածի («Թուրքիայի կողմից հայ ազգի դէմ գործադրուած եւ ցարդ անպատիժ մնացած ցեղասպանութեան ոճիրը պէտք է դատապարտուի եւ դարմանուի բռնագրաւուած հողերի վերադարձով եւ վնասների արդար հատուցումով՝ հայ ազգին») փոքր-ինչ խմբագրուած տարբերակը: Գունագեղ ծաղկեպսակ-«պլակատի» ներքնամասում առկայ այդ նոյն «յետադարձ հասցէն» բացատրում է ծաղկեպսակի հայ ինքնութեան սիմվոլներով յագեցած լինելը, քանզի Դաշնակցութիւն կուսակցութիւնը հէնց

© National Library of Armenia

իրեն է համարում 1918 թ. հայ պետականութեան վերականգնման գործի առաւել ակտիւ մասնակիցը: Ընդհանրապէս, այդ կուսակցութեան անունից բերուած ծաղկեպսակները միշտ էլ աչքի էին ընկնում նրբաճաշակութեամբ: 1997 թ. ապրիլին, օրինակ, Դաշնակցութիւնը յուշարձանին դրեց կուսակցութեան բարդ խորհրդանշանով ու անուանմամբ մի ծաղկեպսակ, ինչը փաստօրէն պլակատային լեզուով արտայայտեց (չնայած այդ ժամանակաշրջանում նրանց նկատմամբ առկայ հետապնդումներին[20]) կուսակցութեան առկայութեան փաստը Հայաստանի քաղաքական կեանքում (նկ. 20):

Ծաղկեպսակների յետադարձ հասցէն կարող է ծառայել երկրի քաղաքական եւ սոցիալական կառուցուածքի փոփոխութեան ակնառու ցուցիչ: Այսպէս, Դաշնակցութիւն կուսակցութեան նման, իրենց ներկայութեան մասին էին յայտարարում այլ քաղաքական կուսակցութիւններ ու հասարակական կազմակերպութիւններ եւ կամ նոր կառուցուածքային կազմաւորումներ: Վերն արդէն յիշուեցին մի քանի կազմակերպութիւններ: 1988 թ. ապրիլին «Հայ ժողովուրդի նահատակներին՝ Հայկական ժողովրդային շարժումից» ծաղկեպսակով[21] իր ներկայութեան մասին յայտնեց նաեւ Լիբանանում գործող այդ կազմակերպութիւնը, որի ինը տարի անց բերուած ծաղկեպսակն արդէն ձեւաւորուած էր կազմակերպութեան զինանշանի պատկերով (նկ. 21): 1999 թ. ապրիլին մենք ֆիքսեցինք ծաղկեպսակներ համայնքների անունից (նկ. 22), ինչն անդրադարձ էր 1996 թ. աշնանը Հայաստանում տեղական (համայնքային) ինքնակառավարման համակարգի ստեղծման: 1997 թ. ծաղկեպսակների լեզվով իրենց մասին յայտարարեցին հացամթերքների (նկ. 23), հեռախօսային կապի (Արմենթել) եւ այլ բնագաւառների մի շարք խոշոր մոնոպոլիաներ: «От воинов России» («Ռուսաստանի զինուորներից») ծաղկեպսակը վկայում էր Հայաստանում ռուսական զօրակազմի առկայութեան մասին, իսկ հայկական մի զօրամիաւորման բերած նրբագեղ ծաղկեպսակը (նկ. 24) (ընդ որում, քչերից մէկը, որտեղ ծաղիկներից պատրաստուած հիմնագոյնում օգտագործուած էր սեւ գոյնը) վկայում է 1990-ականների կէսին հայկական բանակի դերի աճը: 1990 թ. ապրիլի մի բաւականին մեծ չափերի (այդ օրուայ թերեւս մակերեսով ամենամեծ) ծաղկային ձեւաւորմամբ պսակ էլ ներկայացուած էր նորաստեղծ «Սասունցի Դաւիթ» կամաւորական ջոկատի կողմից. հարթ մակերեսով կարմիր հիմնագոյնին սպիտակ մեխակներով գրուած էր ջոկատի անուանումը, «75» եւ երեք գոյնի մեխակներով ստեղծուած էր հայկական եռագոյնը (նկ. 25): Ջոկատն արդէն հասցրել էր մարտական մկրտութիւն ստանալ Երասխաւանի եւ Նոյեմբերեանի կռիւների ժամանակ, ապագայում նրան սպասում էին փորձութիւններ կրկին Տաւուշում, ապա Զանգեզուրում: Սպիտակ հիմնագոյնի վրայ սեւ խաչ էր պատկերուած մէկ այլ «մարտական» կազմակերպութեան ծաղկեպսակին. 1999 թ. բերուած այդ պսակի ժապաւէնին գրուած էր՝ «Եղեռնի զոհերի յիշատակին. Ձեռնամարտի հայկական մարտարուեստի ֆեդերացիայից. Մենք, միշտ վրէժխնդիր ենք» (նկ. 26): Վերջապէս, դեսպանութիւնների եւ միջազգային կազմակերպութիւնների բերած բազմաթիւ ծաղկեպսակները բացայայտում էին Երեւանում դիւանագիտական ծառայութիւնների ներկայութեան աստիճանը եւ Հայաստանի արտաքին քաղաքական կապերի աշխարհագրութիւնը: Որպէս օրինակ, յիշենք Հայաստանում ՄԱԿ-ի

ներկայացուցչութեան (նկ. 27) կամ Փարիզի քաղաքապետի բերած ծաղկեպսակները: Վերջինիս «յետադարձ հասցէն» նշող կապոյտ-կարմիր ժապաւէնը, ֆրանսիական եռագոյնն ապահովելու նպատակով, գեղեցիկ կերպով լրացուել էր ծաղկեպսակի սպիտակ մեխակներով:

Ինչպէս արդէն նշուել է, ծաղկեպսակը սովորաբար յուշարձանին դրւում էր կոլեկտիւի եւ, շատ հազուադէպ, անհատի անունից: Այդ իմաստով յատկանշական է «Զօրավար Անդրանիկից» մակագրութեամբ 1997 թ. ապրիլեան ծաղկեպսակը (նկ. 17): Նոյնիսկ եթէ այդ անուան ներքոյ հասկացւում էր այս կամ այն կազմակերպութիւնը կամ ընկերութիւնը[22], համապատասխան հոլովմամբ նման մակագրութեան (առանց չակերտների) առկայութիւնից ենթադրելի է որպէս «յետադարձ հասցէատիրոջ»՝ հէնց լեգենդար ֆիդայու եւ զօրավարի ներկայութիւնը, որը դեռեւս կենդանութեան օրոք համարւում էր բոլոր ճնշուած հայերի պաշտպանը: 1997-ի ապրիլքսանչորսեան սգոյ երթում նրա «ներկայութիւնը» համեմատելի է նրա համանման «ներկայութեանը» բազմամարդ թատերական հրապարակում՝ 1980-ական թթ. վերջին:

Այն ժամանակ՝ 1988 թ. փետրուարի հանրահաւաքներից մէկին, նրա՝ հայոց ազգային հերոսի, «հերոսների մէջ ամենաժողովրդականի» մեծադիր դիմանկարը «բազմութեան ուղիղ կենտրոնում վեր խոյացաւ... Միաժամանակ հնչեց ֆիդայական խրոխտ երգը՝ Սարերից իջաւ մի խումբ ճիւաւոր: Բազմութիւնը քարացաւ, արցունքոտ աչքեր երեւացին, օդում սկսեցին ճոճուել բռունցքները: Կարծես նորից յառնեց Անդրանիկը: Ուրիշ էլ ո՞վ, եթէ ոչ՝ նա»[23]: Որոշ ժամանակ անց նրա անունը յայտնուեց ցուցարար կանանցից մէկի թղթից պատրաստուած գլխարկին՝ «Անդրանի՛կ, փրկի՛ր հայերին» գրութեամբ:

«Յետադարձ հասցէատիրոջ» խորհրդանշական ներկայութիւնը յայտնելու ծաղկեպսակային եղանակն օգտագործուեց նաեւ 1989 թ. ապրիլի 24-ին, «Եղեռնի զոհերի յիշատակին՝ Ղարաբաղ կոմիտէի տղաների կողմից» պսակի միջոցով (նկ. 28). յիշենք, որ «Ղարաբաղ» կոմիտէի անդամներն այդ ժամանակ մոսկովեան բանտերում էին: Այդ օրը Շարժման ղեկավարների ներկայութիւնը «հաստատուեց» նաեւ նրանով, որ դէպի յուշարձան սգոյ երթին մասնակցում էին բանտային հագուստ կրող նրանց նմանակները:

*

Ծաղկեպսակ-«ցուցապաստառի» ոճի բուռն զարգացումն ըստ երեւոյթին բացատրւում է այն հանգամանքով, որ աւանդական գիտակցութեան մէջ՝ որպէս զոհուածների յուշարձանին նուիրաբերուող իր, ծաղկեպսակն աւելի է պատշաճում եւ ընդունւում, քան թէ պլակատը կամ տրանսպարանտը, չնայած վերջիններս նոյնպէս առկայ էին 1988 թ. ապրիլեան սգոյ երթում, իսկ 1989 եւ 1990 թթ. ապրիլ ամիսներին քանակային առումով նոյնիսկ գերազանցում էին ծաղկեպսակներին: Հետագայ տարիներին ցուցապաստառների թիւը կտրուկ նուազեց եւ 1995 թ. ապրիլին մենք լուսանկարեցինք միայն մէկ, հապճեպ գրուած պլակատ, որով պահանջւում էր Դաշնակցութիւն կուսակցութեան կալանուած անդամների ազատում: Նմանապէս կտրուկ կերպով պակասեցին նաեւ քաղաքականացուած ծաղկեպսակ-«ցուցապաստառները»՝ տեղ զիջելով խաչերով, յաւերժութեան նշանով ու աւանդական յուշաժապաւէնով մեծաթիւ ծաղկեպսակներին: Բնորոշ է, որ եթէ «ցուցապաստառային

© National Library of Armenia

անդորրութեան» շրջանում դրանք, այնուամենայնիւ, յայտնւում են, ապա դա տեղի է ունենում հէնց ցեղասպանութեան զոհերի յիշատակի օրը: Այսպէս, 1995 թ. ապրիլի 24-ին ընդդիմութիւնը սգոյ երթի դուրս եկաւ ցուցապաստառներով, որոնք չնայած չունէին բացայայտ հակակառավարական բնոյթ, բայց, այնուամենայնիւ, ակնարկում էին սրուած եւ ոչ պարզ քաղաքական իրավիճակի առկայութիւնը (օրինակ՝ «Հայաստանը՝ առանց հակահայերի») կամ պահանջում էին քաղբանտարկեալների ազատում: Բնորոշ է, որ նոյն ժամանակաշրջանում անցկացուող հանրահաւաքների ժամանակ ցուցապաստառային մեթոդը ընդդիմութիւնը բնաւ չէր օգտագործում:

Ծաղկեպսակների եւ ցուցապաստառների այդօրինակ էվոլիւցիան լաւ է արտացոլում երկրի քաղաքական իրավիճակի փոփոխութիւնը:

Քաղաքական նկատառումներով ծաղկեպսակի օգտագործման հետաքրքիր օրինակ էր մի խումբ ցուցարարների ակցիան 1989 թ. մարտի 8-ին՝ Կանանց միջազգային օրը: Նրանք Սուրէն Յարութիւնեանին (այն ժամանակ ՀԿԿ կկ-ի առաջին քարտուղար), մատուցեցին ծաղկեպսակ-նուէր՝ ժապաւէնի վրայ «Սիրուշին» մակագրութեամբ, կախելով այն Կենտկոմի շէնքի ցանկապատի ճաղերից: Այդ ակցիայի իմաստն այն էր, որ առաջին քարտուղարին երկչոտ, տղամարդուն ոչ վայել քաղաքականութիւն վարելու համար ժողովուրդը յորջորջել էր իգական «Սիրուշ» անունով, որ «Սիրանոյշ» անուան (որում զգացւում էր ձայնային նմանութիւն «Սուրէն» անուան հետ. յամենայն դէպս, այդ անուան հինգ տառերից չորսը առկայ են «Սիրանոյշ» անուան մէջ) կրճատ ձեւն է: Յիշենք, որ նրան անուանում էին նաեւ «մօրքուր»: Յիշեալ գործողութեամբ ընդգծւում էր ոչ միայն քարտուղարի՝ ժողովրդի կարծիքով կանացի բնոյթը, այլեւ այն, որ նա քաղաքական դիակ է: Այդ ակցիայից յետոյ լուրեր տարածուեցին, թէ իբր այդուհետեւ Սիրուշ անունով ննջեցեալների յուղարկաւորման համար ծաղկեպսակ պատուիրելիս պահանջւում է անպայման ներկայացնել քաղաքացու մահուան վկայականը:

Այսպիսով, ծաղկեպսակը կարող է ամբողջութեամբ կրել ցուցապաստառի գործառոյթը: Այն կարող է նոյնքան տեղեկատու լինել ինչպէս գեղարուեստական, այնպէս էլ բառային մակարդակով: Ծաղկեպսակները՝ ցուցապաստառների նման, ապրում են էվոլիւցիա, ինչը ցուցիչ է ծառայում ոչ միայն քաղաքական իրավիճակի փոփոխութեան, այլեւ ինքնութեան ձեւափոխման:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Հեղինակը խորին շնորհակալութիւն է յայտնում իր գործընկեր Լ. Ց. Աբրահամեանին սոյն յօդուածի համատեղ քննարկումների եւ օգտակար խորհուրդների ու դիտողութիւնների համար:

2 Տե՛ս օրինակ. **M. Rickards,** *Posters of the First World War*. New York, 1968, p. 8-13; J. Barnicoat, A concise history of posters: 1870-1970. New York, 1972, p. 183-184, 223; **M. Fischer and M. Abedi,** *Debating Muslims: cultural dialogues in postmodernity and tradition. Wisconsin*, 1990, p. 335-382; **W. Hanaway,** *The symbolism of Persian revolutionary posters*. - «Iran Since the Revolution: Internal Dynamics, Regional Conflict, and the Superpowers», New York, 1985, p. 31-50; Cultural representations in the Middle East: political cartoons [Special issue]. - «Princeton Papers: Interdisciplinary Journal of Middle Eastern Studies», Spring 1997, vol. VI. Նկատենք, որ այս եւ նմանատիպ մի շարք այլ ուսումնասիրութիւնների յենքը կազմում են մամուլի հրապարակումներում տեղ գտած պատկերները, բազմատիրած, բացառապէս պրոֆեսիոնալ նկարիչների ստեղծած պաստառները, ծաղրանկարները եւ այլն:

3 Շարժման ընթացքի համապարփակ ուսումնասիրութիւնը տե՛ս. **Mark Malkasian,** *«Gha-ra-bagh!»:* The Emergence of the National-

Democratic Movement in Armenia. Detroit, 1996. Շարժման ազգագրական ուսումնասիրութիւնը տես, օրինակ՝ **Լ. Աբրահամեան,** *Մէսը, նախաթատրոնը եւ Թատերական հրապարակը*. - Բեմ, 1990, թիւ 1, էջ 7-19: Նոյնը, *Քառսը եւ կոսմոսը ժողովրդական ելոյթների կառուցուածքում. Ղարաբաղեան շարժումը ազգագրագէտի հայացքով*. - Մշակոյթ, 1990, թիւ 2-3, էջ 14-21: Նոյնը, The anthropologist as shaman: interpreting recent political events in Armenia. - Beyond boundaries: understanding, translation and anthropological discourse, Oxford, UK/Providence, USA, 1993, p. 100-116.

4 Հայերէնում «ցուցապաստառ» հասկացութիւնը ներառում է նաեւ ռուսերէնի միջոցով ներմուծուած՝ հայ խօսակցական եւ գրաւոր լեզուում այսօր արդէն քիչ գործածուող «պլակատ» եւ «տրանսպարանտ» երեւոյթները: Քանի որ սոյն աշխատանքում ցուցապաստառներին շատ յաճախ տարբերակուած վերաբերմունք է ցուցաբերուում, ուստի, նիւթի առաւել ճշգրիտ մատուցման նպատակով, գերադասելի համարեցինք նշեալ եզրերի օգտագործումը:

5 Տե՛ս, օրինակ՝ **Լ. Абрамян, А. Марутян.** *Транспаранты и плакаты как зеркало Карабахского движения*. - Всесоюзная научная сессия по итогам полевых этнографических и антропологических исследований 1988-1989 годов. Тезисы докладов. Алма-Ата, 1990, с. 122-123. **S. Platz.** *The Kharabagh demonstrations: visual and verbal representations of Armenian identity*. - The annual of the society for the study of Caucasia. 1991, # 3, p. 19-30. **H. Marutyan.** *The genocide of the Armenians. Historical memory and transformation of ethnic stereotypes (according to the materials of banners and posters of the Kharabagh Movement)*. - Synopsis, 3, 1994, p. 111-119. **Ց. Մարութեան, Լ. Աբրահամեան,** *Հայ ինքնութեան պատկերագրութիւնը (ըստ Ղարաբաղեան շարժման մի խումբ ցուցապաստառների)*. - *Հայեացք Երեւանից*. հայագիտական, 1997, թիւ 4, էջ 56-68: **Ց. Մարութեան,** *Ղարաբաղ-Հայաստան փոխյարաբերութիւնները ըստ Ղարաբաղեան շարժման ցուցապաստառների - Արդի էթնամշակութային գործընթացները Հայաստանում*, 1, 1997, էջ 20-22: **А. Марутян.** *Иконография Карабахского движения и трансформация армянской идентичности. – «Вопросы этнологии Кавказа»*. Первая международная конференция. Краткое содержание докладов, Ереван, 1999, с. 27-31. **Ց. Մարութեան,** *Ղարաբաղեան շարժման ցուցապաստառները՝ որպէս մշակութային նոր դրսեւորում եւ փոփոխուող հասարակութեան ցուցիչ - Ժողովրդավարութեան զարգացումը Հայաստանում*, Երեւան, 1999, էջ 184-189: **А. Марутян,** **Л. Абрамян.** *Тема геноцида в иконографии армянской идентичности: венки-плакаты (по материалам Карабахского движения)*. – Лавровские (Среднеазиатско-Завкавказские) чтения 1998-1999 гг. Краткое содержание докладов. Санкт-Петербург, 2001, с. 126-128; **Ցարութիւն Մարութեան,** *Հայ պոեզիան որպէս ինքնութեան պատկերագրութիւն (ըստ Ղարաբաղեան շարժման ցեղասպանութեանը նուիրուած ցուցապաստառների)*. – Հայկազեան հայագիտական հանդէս, Պէյրութ, 2000, հ. Ի, էջ 269-306; **Ցարութիւն Մարութեան,** *Եղեռնը Ղարաբաղեան շարժման ցուցապաստառներում*. - Հայեացք Երեւանից, 2000, թիւ 4, էջ 6-13; **А. Марутян.** *К вопросу о роли исторической памяти в национальных движениях*. - IV Конгресс этнографов и антропологов России. Тезисы докладов, М., 2001, с. 96;**Harutyun Marutyan,** *Iconography of the Gharabagh Movement*. An Index of the Transformation of Armenian Identity. - Armenian Forum, 2001, vol. 2, no. 4, Winter 2000 (Published January 2003), p.39-55

6 **Սիլվա Կապուտիկեան,** *Մտորումներ ճանապարհի կէսին*, Երեւան, 1961, էջ 112:

7 **Ազատ Եղիազարեան,** *Բանաստեղծի ճանապարհը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սիլվա Կապուտիկեանի ծննդեան 80-ամեակի առթիւ)*, ՊԲՀ, 1999, թիւ 2-3, էջ 6:

8 Այդ տրանսպարանտներից մէկի վրայ գրուած էր «Հատուցէք հողերը», իսկ Մասիսների ուրուապատկերով մի պլակատին՝ «Արդար լուծէք հայոց հարցը»: Տե՛ս **Մկրտիչ Արմէն,** *Զեկուցագիր Հայաստանի կոմունիստական կուսակցութեան Կենտրոնական կոմիտէին*. - Գրական թերթ, 1991, 6 սեպտեմբերի: Մէկ այլ ակնարկի վկայութեամբ, ցուցարար «երիտասարդները տանում էին պաստառներ՝ խոշորատառ կարգախօսներով՝ «Ազատութիւն եօթ հայրենասէրներին», «Պահանջում ենք հայկական դատի արդար լուծում», «Հայոց դատը անժամանցելի է», «Պահանջում ենք մեր բռնագրաւուած հողերը»: Պաստառների վրայից իջել եւ քայլող շարքերի վրայ թեւածում էր հազարաւոր շուրթերից պոկուած երեք ճնչիւնը՝ «Հո՛-ղե՛-րը՛», «Հո՛-ղե՛-րը՛»...: Երկու... պատանիներ... տանում էին սատինի մի կտոր՝ վրան անվարժ ձեռքով գրուած... «Արդար լուծէք Հայոց հարցը»»: Տե՛ս **Սիլվա Կապուտիկեան,** *Էջեր փակ գգրոցներից*, Երեւան, 1997, էջ 60, 77: Տե՛ս նաեւ Հայոց ցեղասպանութեան թանգարանի ցուցադրանքը:

9 Տե՛ս. 1915 թուականի Եղեռնի զոհերի յիշատակը յաւերժացնող կոթողի բացումը. - Սովետական Հայաստան, 30 նոյեմբերի 1967 թ., թիւ 279 (14240):

© National Library of Armenia

10 Տե՛ս օրինակ. Արարատ, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, «Էրեբունի» հրատ., 1984: **H. Petrosyan.** *The Sacred Mountain. – In: Armenian Folk Arts,* Culture and Identity (edited by L. Abrahamian, N. Sweezy). Bloomington and Indianapolis, 2001, p. 33-39.

11 Հետաքրքիր է, որ Իրանական յեղափոխութեան (1979 թ.) ցուցապաստառների մէջ էլ են հանդիպում մանրանկարչութեան սկզբունքներով ձեւաւորուած նմոյշներ: Տե՛ս օրինակ, **Michael M. J. Fischer and Mehdi Abedi,** նշ. աշխ., էջ 356, 358, նկ. 6.10, 6.11.

12 Սրբազան բովանդակութեամբ գրքի պաշտամունքի մասին տե՛ս. **Ց. Մարութեան,** *«Տան սուրբ» երեւոյթը. ակունքների հարցը եւ մերօրեայ դրսեւորումները.* - «Հայոց սրբերը եւ սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը», Երեւան, 2001, էջ 337-346:

13 Ամերիկեան նշանաւոր հասարակական եւ քաղաքական գործիչ Հենրի Մորգենթաուն 1913-16 թթ. ԱՄՆ-ի դեսպանն էր Թուրքիայում: Իր յուշերում նա փաստական նիւթերի հիման վրայ նկարագրում է 1915 թ. Մեծ եղեռնը՝ այն համարելով «պատմութեան ամենամեծ ոճիրը»: Մանրամասն տե՛ս. **Հ. Մորգենթաու,** *Ամերիկեան դեսպան Հենրի Մորգենթաուի յուշերը եւ հայկական եղեռնի գաղտնիքները,* Երեւան, 1990: Տե՛ս նաեւ. Հենրի Մորգենթաուն եւ հայ ժողովուրդը, Երեւան, 1999: 1999 թ. ապրիլի 22-ին կայացաւ «Հայոց ցեղասպանութիւնը, դեսպան Հ. Մորգենթաուն եւ ամերիկեան արձագանքները 1914-23 թթ.» միջազգային գիտաժողովը, իսկ յաջորդ օրը նրա անուամբ կոչուեց Երեւանի Աջափնեակ համայնքի դպրոցներից մէկը, եւ ապա նրա գերեզմանից վերցրած հողով աճիւնասափորը տեղադրուեց Հայոց ցեղասպանութեան զոհերի յուշահամալիրի յուշապատի մէջ: Արարողութիւններին մասնակցելու համար Երեւան էին ժամանել Հ. Մորգենթաուի թոռը, ծոռները: Տե՛ս. Ազգ, 21 եւ 24 ապրիլի 1999, թիւ 71 եւ 74 (1816, 1819):

14 Այս կազմակերպութիւնը, ի թիւս ԱՄՆ-ի հայութեան համախմբմանն ուղղուած տարաբնոյթ գործունէութեան, նաեւ հակազդում է հայերի ցեղասպանութիւնը հերքելու փորձերին, անդրադառնում ցեղասպանութիւնը մերժելու թուրքական կառավարութեան բոլոր ճիգերին եւ պայքարում, որպէսզի ԱՄՆ-ի կառավարութիւնը ճանաչի հայերի ցեղասպանութիւնը:

15 1894-96 թթ. կոտորուեց շուրջ 300 հազ. հայ, 100 հազ-ը բռնի մահմեդականացուեց, եւս 100 հազ.-ը տարագրուեց տարբեր երկրներ, ամայացան հայաբնակ բազմաթիւ վայրեր: 1894-96 թթ. հայկական կոտորածները արեւմտահայութեան առաջին զանգուածային ցեղասպանութեան փորձն էր: Տե՛ս, օրինակ. *Братская помощь пострадавшим в Турции армянам.* Литературно-научный сборник. М., 1897 (Введение, Отдел II); Հայ ժողովրդի պատմութիւն, Երեւան, 1981, հ. VI, էջ 276: **Զ. Կիրակոսեան,** *Երիտթուրքերը պատմութեան դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914).* գիրք առաջին, Երեւան, 1982, էջ 56:

16 1909-ի կիլիկիահայութեան եւ, մասնաւորապէս, Ադանայի հայութեան ջարդերին զոհ գնաց շուրջ 30 հազ. հայ: Տե՛ս. **Շ. Թ. Թորոսեան,** *Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ.*, Երեւան, 1987, էջ 25-37: Տես նաեւ. **Ս. Պարթեւեան,** *Կիլիկեան արհաւիրքը,* Կ. Պոլիս, 1909: **Մուշեղ եպիսկոպոս,** *Ադանայի ջարդը եւ պատասխանատուները,* Բոստոն, 1910: **Ց. Պապիկեան,** *Ադանայի եղեռնը:* Տեղեկագիր Ցակոբ Պապիկեանի, Կ. Պոլիս, 1919: Կիլիկեան կսկիծներ (Վաւերաթուղթեր Կիլիկիոյ կաթողիկոսութեան դիւանէն 1903-1915), Պէյրութ, 1927: **Ա. Ս. Համբարեան,** *Կիլիկիայի 1909 թ. հայկական կոտորածները.* - ՊԲՀ, 1988, թիւ 1, էջ 13-29:

17 Այս հարցի առիթով ընթերցողին խորհուրդ կը տանք ծանօթանալ հետեւեալ ուշագրաւ յօդուածին. **Մեսրոպ արք. Աշճեան,** *«Ապրիլեան նահատակաց սրբադասման հարցը».* - «Հայոց սրբերը եւ սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը», Երեւան, 2001, էջ 426-432:

18 Խորհրդային Ադրբեջանում իրականացուած «ապիտակ ցեղասպանութեան» մասին վերջին գիտական հրապարակումը տե՛ս, օրինակ. **Ю. С. Барсегов.** *Геноцид армян – преступление по международному праву.* М., 2000, с. 226-232.

19 Հմմտ. ՀՅԴ 1892 թ. Առաջին ընդհանուր ժողովում ընդունած Ծրագիր-Կանոնագրի «Նպատակ» մասում ձեւակերպուած բանաձեւը՝ «Հ. Յ. Դաշնակցութեան նպատակն է ապստամբութեան միջոցով Տաճկահայաստանում ձեռք բերել քաղաքական եւ տնտեսական ազատութիւն» եւ ՀՅԴ ԻԲ ընդհանուր ժողովի կողմից հաստատուած «Ծրագրի» Բ մասի «Նպատակ» բաժնի Ա եւ Գ կետերը՝ «Կերտել Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան», «Միացեալ Հայաստանի սահմանների մէջ պիտի մտնեն Սեւրի դաշնագրով սահմանուած հայկական հողերը, ինչպէս նաեւ Նախիջեւանի, Ախալքալաքի եւ Ղարաբաղի շրջանները»: Տե՛ս. **Հրաչ Տասնապետեան,** *Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. ընդհ. ժողով (1890-1924),* Աթէնք, 1988, էջ 22: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն. Ծրագիր, հաստատուած ԻԲ ընդհ. ժողովին կողմէ, 1982, էջ 25-26:

20 Հայաստանի հանրապետութեան նախագահի 1994 թ. դեկտեմբերի 28-ի հրամանագրով ՀՅԴ գործունէութիւնը ժամանակաւորապէս դադարեցուել էր: Տե՛ս. Հայաստանի հանրապետութիւն, 29 դեկտեմբերի 1994 թ., թիւ 254 (1118):

21 Տե՛ս «Երկաթէ շերեփ», Բեյրութ, 1988, թիւ 13, յունիս, բացառիկ: Հմմտ. **Գեւորգ Յազըճեան,** *Երեւանի սփյուռքահայ ուսանողութեան մասնակցութիւնը արցախեան շարժմանը (20-25 փետրուարի 1988 թ.),* Ազգ, 4 մարտի 1998 թ., թիւ 36 (1539):

22 Ամենայն հաւանականութեամբ, ցուցապաստառը «Զօրավար Անդրանիկ» հայոց համազգային միութեան (նախագահ՝ ըմբշամարտի գծով աշխարհի նախկին չեմպիոն Նորայր Մուշեղեան) կողմից էր, որը դեռեւս 1990-91 թթ. ակտիւ գործունէութիւն էր ծաւալել Փարիզից զօրավար Անդրանիկի աճիւնը Հայաստան տեղափոխելու կապակցութեամբ:

23 **Խոսրով Խլղաթեան,** *«Յաղթական բազուկդ շարժի՛ր վերստին».* _ Հայաստանի հանրապետութիւն, 18 փետրուարի 2000 թ., թիւ 29 (2499):

WREATHS AS POSTERS AND BANNERS

(the Genocide and the Iconography of the Armenian Identity)

HARUTYUN MARUTYAN

Summary

The late 1980s and 1990s were the years of active formation of new Armenian identity. The article discusses this process through the prism of the wreaths layed to the memorial dedicated to the victims of the Armenian genocide of 1915. The author shows that wreaths were often carrying out the function of posters and banners, being informative both in verbal and artistic levels. Like posters and banners, wreaths were undergoing evolution, which serves as an index of changing in the political situation, as well as in the identity of the Armenian nation in general.

© National Library of Armenia



Ակ. 1

Ակ. 2



Ակ. 3

Ակ. 4

© National Library of Armenia

Նկ. 5

Նկ. 6

Նկ. 7

Նկ. 8

© National Library of Armenia

Նկ. 9

Նկ. 10

Նկ. 11

Նկ. 12

© National Library of Armenia

Գկ. 13

Գկ. 14

Գկ. 15



Գկ. 16

© National Library of Armenia

Նկ. 17

Նկ. 18



Նկ. 19

Նկ. 20

© National Library of Armenia

Նկ. 21



Նկ. 22

Նկ. 23

Նկ. 24

© National Library of Armenia



Գկ. 25



Գկ. 26



Գկ. 27

© National Library of Armenia